Անուշ Թասալյան

Գաղտնիքը

Օրը բացվեց, լուսացավ,
Փոքրիկ Արան արթնացավ:
Լվացվեց ու թոչկոտեց,
Նախաճաշեց, հագնվեց:
Ուրախ մուլտֆիլմ էր նայում,
Մեկ էլ հանկարծ բղավեց . -
-Պապի՛կ, պապի՛կ, դու գիտե՞ս՝
Մի մեծ գաղտնիք ունենք մենք:
-Ո՞րն է գաղտիքը, Արա՛,-
Ասաց ապշած պապիկը:
-Նայի՛ր, պապի՛կ, երկնքին,
Դու հիշո՞ւմ ես, մենք երեկ
Գնդակով ենք դուրս եկել:
Պապը գրկեց թոռնիկին
Ու մոտեցավ բաց շեմին .
-Այո՛, հիշում եմ, Արա՛,
Ո՞րն է գաղտնիքը սրա:
-Պապի՛կ, ախր, լա՛վ նայիր,
Դեղին գնդակս երեկ
Շա՛տ ուժեղ ենք գլորել,
Ու երկնքում հիմա նա

Կլոր կրակ է դարձել: